

Դավիթ Վ. Պետրոսյան, Պատում, մեդիատեքստ, հակառակ հեռանկար, Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2017, 184 էջ*:

Բանալի բառեր – որոնող, պատում, խոսք, մեդիատեքստ, հակառակ հեռանկար, էսսե, գիտական մեթոդ, հասկացություն, ինքնություն, տեքստ, տարընթերցում:

Մեզնից դուրս ու մեզնից անկախ ֆիզիկական և մետաֆիզիկական իրողությունները, կեցության հանգամանքները նույնն են բոլորիս համար: Բայց այդ նույնությունը յուրաքանչյուրիս մեջ ուրույն միկրոաշխարհ է դառնում, նաև որոշակիորեն անհատականացած խոսք՝ ըստ դրանք իմաստավորելու մեր անհատականության:

Խոսքն ինքն իրեն այս կամ այն առիթով բացահայտած հեղինակն է: Մարդը երջանիկ պատահականությամբ կարող է միլիոններ շահել, բայց խոսքը երբեք չի կարող ավելի իմաստալի ու ինքնատիպ լինել, քան հեղինակն է, իր ներքին կեցությունը: Դրանից է, որ մարդկությունը երբեք խոսքի պակաս չի ունեցել, բայց միշտ էլ փնտրել է դժվարությամբ կայացող ինքնատիպը: Մանավանդ արդի իրականության մեջ, որը նաև անլրջության, խոսքային ժխտի իրականությունն է: Իրականություն, որում որակ ձևավորողը մակերեսայնությունն է, խոսքին ամենակարող խորհրդավորությունից զրկող ճապաղությունը: Համատարած ժխտը, որի մթնոլորտում շատ դժվար է ներհայեցած լռության համար տարածք ու ժամանակ գտնելը: Եվ այդ բանավոր ու գրավոր ժխտի մեջ անդիմությանը իրար հետ ասես մրցակցում են խոսքային մասնագիտությունների ու գործունեության ոլորտների ներկայացուցիչները և նրանք, ում համար խոսքը հենց միայն ասուն լինելու գործառույթ ունի: Եվ այս տխուր իրողության վերաբերյալ փիլիսոփայի ասածը, իհարկե, բոլորովին էլ չափազանցություն չէ. «Ինչպես հայտնի է, մեր ժամանակի արմատական բնութագրիչն ասել-խոսելն է, որտեղ մտքին հատկացված է ոչ ավելի նկատելի տեղ, քան խոստի դեզում՝ ասեղին»¹:

Մեր օրերի այս զավեշտալի համայնապատկերից առանձնանում է Դավիթ Պետրոսյանի գիրքը՝ լռության մեջ այդ տարածքն ու ժամանակը գտած մտավորականի կայացած ինքնության խոսքը: Այն («**Պատում. մեդիատեքստ. հակառակ հեռանկար**») գիտական ուսումնասիրությունների ու

*Ընդունվել է տպագրության 29.08.2017:

¹ Սվասյան Կ., Հոդվածներ, Եր., 2014., էջ 117:

էսսենների ժողովածու է: Ընդ որում, ընդգրկած նյութին ձգբրտորեն համապատասխանող ու լավ ընտրված վերնագրով, որում պատումն ու մեդիատեքստն ուսումնասիրված նյութն է, իսկ հակառակ հեռանկարը՝ գեղարվեստական արտացոլման, այն ընկալելու և դրանց գիտական ճանաչողության մեթոդը:

Դ. Պետրոսյանի գիրքը ներառում է երկու էսսե և վերջին տարիների նրա ուսումնասիրությունները, կազմված է բովանդակային երեք բաժիններից՝ «Պատում և հակառակ հեռանկար» (պայմանականորեն ասած՝ գրականագիտություն), «Մեդիատեքստի երկխոսայնությունը» (դարձյալ պայմանականորեն՝ ժուռնալիստիկա) և «էսսեններ»: Առաջին երկու բաժինների վերաբերյալ նշածս վերապահումը (պայմանականորեն ասած) միայն դրական իմաստ ունի, որովհետև հեղինակն այդ բաժիններում ամփոփած հետազոտություններում չի ներկայանում գեղարվեստական գրականությանը և ժուռնալիստիկային բնորոշ մասնագետ-գիտնականի նեղ տեսահորիզոնով: Ժողովածուում ներառված նրա յուրաքանչյուր ուսումնասիրությանը բնորոշ է մարդկային գործունեության արդյունքներն ու համակեցական իրողությունները դիտարկելու գիտական մեթոդի առավելությունը: Դա ամեն ինչի էությունը կոնկրետ հարցադրումով և տեսականորեն ընդհանրացող իմաստավորումների շրջանակում դիտարկելն է: Ավելի պարզ ասած՝ հակառակ կենսական իրականության և գրական տեքստի շատ տարածված ու հեշտ, բայց դիտարկողի՝ ինքնատիպությունից զուրկ վերապատումի, Դ. Պետրոսյանի տեքստին բնորոշ է վերլուծականությունը:

Նրա գիտական ոճի մյուս առանձնահատկությունը նյութի վերլուծությունը հիմնախնդրից բխող և ասելիքի տրամաբանությունն առաջ տանող հասկացություններով կառուցելն է: Դա պահանջում է մտքի կազմակերպվածություն, վերլուծական խոսքի դինամիկա՝ հասկացությունից հասկացություն արտածելու համոզիչ տրամաբանություն և այդ ամենից ինքնահոս ամփոփիչ եզրակացություն: Ուզում եմ նորից ընդգծել, որ հատկապես կոնկրետ գիտական խնդիր առաջադրելը (ուսումնասիրությունների վերնագրերն ու ենթավերնագրերը) և հասկացությունների մեթոդով գիտական խոսք շարադրելն է, որով Դ. Պետրոսյանի տեքստը սկզբունքորեն տարբերվում է վերապատմող-նկարագրող անդիմությունից, ինչը մեր միջավայրում արդեն վաղուց գրավել է հասարակագիտական մտքի տարածքը:

Դ. Պետրոսյանի գիրքը բացվում է հեղինակի «Երկու խոսք»-ով: Անհնար է ընթերցել այդ մի քանի էջն ու գլխի չընկնել, որ նա չհասկացվելու մտավախություն է ունեցել: Դա սովորական մուտքի խոսք չէ, այլ գրքի ներառած նյութը նույն կազմի մեջ ու մեկ վերնագրով ներկայացնելու հիմնավորում-բացատրություն: Նա նշում է երեք բաժինները միավորող գործոնները, որոնցով ասես թե իրար չկապվող գրականագիտությունը, ժուռնալիստիկան ու իմաստասիրական էսսեն պիտի միավորվեն՝ դառնալով «հատվածային մենագրություն»²: Դա այդպես է: Բայց նրա տեքս-

2 Պետրոսյան Դ., Պատում, մեդիատեքստ, հակառակ հեռանկար, Եր. 2017, էջ 7:

տերն ուշադիր ընթերցողն անմիջապես գլխի կընկնի, որ դրանք կապակցող կարևորագույն գործոնը հեղինակի մշտառկա ինքնությունն է: Տարբեր բովանդակությամբ ու ժանրերով, վերլուծական ու գեղարվեստական-իմաստասիրական տեքստերի այդ նույնականությամբ է նաև, որ կայացել է ժողովածուի ամբողջականությունը:

Նրա հետազոտական մեթոդի նորարարական դրսևորումն է «հակառակ հեռանկարի» բազմակենտրոնության (թե՛ ստեղծագործողի, թե՛ ստեղծագործությանը հաղորդակցվողի, թե՛ ստեղծագործությունը մեկնաբանողի համար) սկզբունքով առաջնորդվելն ու իր համար դրա կարևորությունը գրքի վերնագրի մաս դարձնելով՝ ընդգծելը: Պատումը մեկն է, տեքստը մեկն է, աղմուկով լեցուն երկրայինն ու լռությամբ խորհրդավոր երկնայինը մեկն են, բայց դրանց ընկալում-տարրնթերցումների հավանականությունը՝ անհիմանալի բազմազանություն: Որքան ստեղծագործող (Որոնող), ընթերցող, որքան դիտող, լսող, միով բանիվ՝ մտածող մարդ, այնքան տարբեր ու ինչքան էլ զարմանալի է՝ հիմնավոր-պատճառաբանված տարրնթերցում:

Ահա այդպես է Դ. Պետրոսյանը բացում գիտնական-որոնողի իր ինքնությունը՝ ձևավորելով Հովհ. Թումանյանի, Համաստեղի, Հր. Մաթևոսյանի, Մ. Գալշոյանի (առանձին դեպքերում՝ նաև ռուս հեղինակների հետ համադրությամբ), բազմաժանր մեդիատեքստի, նրա երկխոսական էությանը բնորոշի վերաբերյալ հետևողական խոսքը: Եվ որովհետև այդ խոսքն անպայման ասելիքով է իմաստավորված ու կառուցված, նրա բոլոր ուսումնասիրություններն ավարտվում են համառոտ ամփոփումներով:

Այսպես, օրինակ, Համաստեղը դիտարկված է ժամանակի ինչպես երկրային՝ ֆիզիկական, այնպես էլ գեղարվեստական ժամանակի չկարգաբերվածության ու հեղինակի ինքնության արդյունք բազմաչափությամբ: Դրան հավելվում են նաև ստեղծագործական շարժում-հերոս-երկխոսություն անցումներում ժամանակի փոխակերպումները՝ տեքստը որոշակիորեն անկախացնելով հեղինակից, ապահովելով ստեղծագործության «շարունակականությունն ընթերցողի մեջ»³: Դ. Պետրոսյանի հարցադրումները հետաքրքիր գիտաձանաչողական առանցքներ են՝ ժամանակի գեղագիտացումը հեղինակի մեջ, գեղարվեստական ժամանակի ապահեղինակացումը, երկխոսությունը՝ իբրև տեքստային ինքնակայության ցուցիչ:

Կամ՝ մեդիատեքստի առանձնահատկությունների վերլուծությունը: Ցանկացած տեքստ, լինի գեղարվեստական, թե՛ մեդիա, երկխոսություն է, բազմապլան երկխոսություն, որը կայանում է ժամանակի մեջ: Ըստ այդմ գոյանում են երկխոսության և ժամանակի անսպառ տիրույթները՝ ձևավորելով լրագրող – ներքին հասցեատեր, լրագրող – արտաքին հասցեատեր փոխհարաբերությունները: Մեդիատեքստը մի կողմից՝ ինքն իր հայելին է, իր մասնագիտական վիճակի ճշգրիտ ցուցիչը («Արդի հայ մամուլը քաղաքակրթական նոր միջավայրում»), մյուս կողմից՝ համակեցական նշանակալի իրողությունների ու հիմնախնդիրների (ցեղասպանություն, ազգային և

3 Նույն տեղում, էջ 22:

գլոբալ մշակութային արժեքներ, հանդուրժողականություն և այլն) դրսևորման ու իմաստավորման հարթությունը:

Առանձնակի ուզում ենք կարևորել մտահղացման այն ինքնատիպությունը, որով Դ. Պետրոսյանը կերպարավեստին բնորոշ հակառակ հեռանկարի արտացոլման հնարավորությունը և առկայությունը տեսնում է ընդհանրապես գեղարվեստական արտացոլման և դրա հնարավոր ընկալման մեջ:

Թերևս էական բացթողում կլինի, եթե չնշենք նաև «Պատում, մեղիատեքստ, հակառակ հեռանկար» գրքի առաջին և երկրորդ բաժիններում հեղինակի օգտագործած գիտական գրականության մասին: Այն ներկայանում է մշակութաբանական, փիլիսոփայական ու գրականագիտական արդի մտքի եվրոպական ու ռուսական հայտնի հեղինակություններով: Դ. Պետրոսյանի տեքստում նրանք ներկայություն են ըստ էության այնքանով, որքանով որ գեղարվեստական գրականության և մեղիատեքստի առանձնահատկությունները նորովի դիտարկելու հնարավորություն են տալիս:

Դ. Պետրոսյանի հերթական գիրքը ներկայացնելու հաճելի հանձնառությունն ուզում են ավարտել հետևյալով: Երբ գիրքն ընթերցելու ժամանակ սկսեցի կարդալ վերջին բաժնի էսսեները ինձ առաջին հերթին հետաքրքրեց հեղինակի ստեղծագործական ինքնության ընթացքը: Որովհետև մարդկային կեցության և աշխարհի ստեղծագործական-վերստեղծող ինքնություն ունենալը կարևորագույն նախապայման է այլ ստեղծագործողի միկրոաշխարհի տարբերակիչ առանձնահատկությունները նկատելու համար:

Էսսեներում արդեն ստեղծագործող Դ. Պետրոսյանն է՝ էութենական ռիթմի ինքնակա և տարանցիկ դրսևորումների հետաքրքիր դիտարկումով, դրանց փոխառնչություններով ու մարդու կեցությունն իմաստավորելու առանձնահատկություններով: Իսկ «Այլացումից առաջ և հետո» էսսեին բնորոշ է բանաստեղծական-ոգեղեն վերլուծականությունը, որի մետաֆիզիկական տիրույթում գործառող խորհրդանիշեր են բառը, լռությունը, մասնակցումի խորհուրդը, գեղեցիկը, բանաստեղծի ինքնապատկերը, էության ճանապարհը և այլն:

Դ. Պետրոսյան Որոնողի վարքագծում ինձ դուր եկավ փիլիսոփայական այն շրջահայեցությունը, որով նա իմաստավորում է տիեզերք հիպերտեքստում իր փնտրտուքը. «Ես նման եմ Հերակլիտեսի կերպավորած այն երեխային, որ աննպատակ խաղում է խորանարդիկներով, տարբեր ձևեր է հաղորդում դրանց, խառնում է, նորից սկսում, և այսպես՝ անընդհատ: Իմ այս «խաղն» էլ նպատակ չուներ, քանզի ո՞վ եմ ես՝ Այլացումից առաջ և հետո...⁴»: Ուրեմն ո՞րն է այդ «աննպատակ» «խաղի» իմաստը: Իհարկե, բարձրագույն հաճույքը՝ կեցության առօրեականության «տարանցիկ ռիթմերից» դեպի «էութենական ռիթմերի» ընթացքը, դրանց հաղորդակից լինելու Որոնողի անցած ոգեղեն ուղին: Նաև համատիեզերական արարչության խորհրդի սեփական ընթերցումն ունենալը և ընթերցվածքը խոսքի վերածելը: Խոսք, որի մեջ է Դ. Պետրոսյան Որոնողը: Այդ խոսքն անհրաժեշտ չափով ծանրաբեռնված է ընդ-

4 Նույն տեղում, էջ 161:

հանրապես կեցության երկրային մասնավոր դրսևորումներում (գեղարվեստական գրականություն, լրագրողական տեքստ և այլն) իմաստներ փնտրող մտքով, հեղինակների ինքնության բաղկացուցիչների ինքնօրինակ դիտարկումներով:

Սերգեյ Ա. Աղաջանյան
Բանաս. գիտ. դոկտոր

Սերգեյ Ա. Աղաջանյան – գիտական հետաքրքրությունները վերաբերում են խորհրդահայ արձակի հիմնախնդիրներին, իրականության գեղարվեստական արտացոլման մշակութաբանական ընդգրկումներին: Հրատարակել է մենագրություններ 1950–1960–ականների խորհրդահայ պատմվածքի և Գ. Մահարու արձակի պոետիկայի վերաբերյալ:

Summary

David Petrosyan. Narration, Media-text, Reverse Perspective
Yerevan, YSU, 2017, 184pp.

Sergey A. Aghajanyan

Key words – Narration, speech, media-text, reverse perspective, essay, scientific method, term, identity, text, variant reading.

The summary presents the content and structure of the fragmented monograph «Narration, Media-text, Reverse Perspective» by D. Petrosyan. The work consists of three parts. The first section articles aim at finding out the connection between narration and reverse perspective in the context of mythical and rational time, space and memory.

The main problem of the second part is the dialogistic character of media-text, inter-textual and inner-textual development where linear connections and relations from media to auditorium and vice versa are shown.

The final collection of essays aim at the synthesis of the previous two sections on metaphysical level. Here the peculiarities of author's artistic perception of a human being are revealed.

Давид Петросян. Нарратив, медиатекст, обратная перспектива. Ер., издательство ЕГУ, 2017, 184 с.

Сергей А. Агаджанян

Ключевые слова – нарратив, речь, медиатекст, обратная перспектива, эссе, научный метод, термин, идентичность, текст, различение.

В рецензии представляются содержание и структура фрагментарной монографии Д. Петросяна «Нарратив, медиатекст, обратная перспектива». Работа состоит из трех разделов. Статьи первого раздела посредством произведений известных писателей выявляют взаимосвязи нарратива и обратной перспективы в контексте мифического и рационального времени, пространства и памяти.

Центральной проблемой второй части книги является диалогичность медиатекста, межтекстовые и внутритекстовые развития, в которых раскрываются горизонтальные связи и отношения от медиа к аудитории и обратно.

Завершающие сборник эссе нацелены на синтез основных тем предыдущих двух разделов на метафизическом уровне. Здесь четко выявляются особенности авторского художественного восприятия человеческого бытия.

ԳՐԱԴԱՐԱՆԱԳՅՈՒՆՆԵՐ

Բ. (ԺԵ) ԳՐԱԴԱՐԱՆ, ԹԻՎ 3 (59), ԽԱՂԻՍ-ԱԵՐԱՐԵՆԵՐԵՐ, 2017

ՎԼՎ ԽԱՆԻԱԿԻՎԱԿԱՆ ԽԱՆՐԵՆ